ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 10

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

04. 07.2020թ. ք. Իջևան

Նախագահ՝ Գ. Ավետիսյան
Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան

Խորհրդի նիստին մասնակցում էին գիտախորհրդի բոլոր անդամները:
Բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Օրակարգ/հուլիս/

1. 2019-2020 ուստարվա երկրորդ/գարնանային/ կիսամյակի I-III կուրսերի քննաշրջանի ամփոփում/ Զեկ. Գ. Ավետիսյան/:
2. Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների անհատական բեռնվածության քննարկում և հաստատում/ Զեկ. Գ. Ավետիսյան/:
3. Մասնագիտական ամբիոնների գործունեության վերաբերյալ ամբիոնների վարիչների տարեկան հաշվետվություն/ Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:
4. Ֆակուլտետի դեկանի ամփոփիչ հաշվետվություն/ Զեկ. Գ. Ավետիսյան/:

1.Լսեցին.- 2019-2020 ուստարվա երկրորդ/գարնանային/ կիսամյակի I-III կուրսերի քննաշրջանի ամփոփման մասին/ Զեկ. Գ. Ավետիսյան/:

Գ. Ավետիսյանը ներկայացրեց 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները: Նա նշեց, որ I-III կուրսերի համար ընթացիկ քննություններ չեն կազմակերպվել և դասընթացների գնահատումը իրականացվել է հանրագումարային 20 միավոր սանդղակով: Քննաշրջանը կազմակերպվել է հեռավար տարբերակով /Zoom հարթակի միջոցով/, ամբիոններում սահմանված ընթացակարգի համաձայն՝ հանրագումարային 20 միավորը ձևավորելով երկու

բաղադրիչի միջոցով. ինքնուրույն աշխատանքների /դասապրոցեսի ընթացքում հանձնարարված առաջադրանքներ/ և բանավոր/գրավոր/ հարցման միջոցով:

Նա նշեց, որ քննաշրջանը սկսելուց առաջ ամբիոնները ԿԾ ղեկավարների համագործակցությամբ ուսումնասիրել են դասընթացների ծրագրերի կատարողականը, դասընթացների թեմատիկայի հարցաշարերի և տոմսերի համապատասխանելիությունը: Գ. Ավետիսյանը նշեց, որ Տնտեսագիտության ֆակուլտետում 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանին մասնակցել է 70 /I-IIIկուրսեր/ ուսանող: «Ֆինանսներ» կրթական ծրագրով 43 ուսանող, «Զբոսաշրջություն» կրթական ծրագրով 27 ուսանող: Քննաշրջանը հաղթահարել է 44 ուսանող: 12 ուսանող ստացել են գերազանց գնահատականներ: Ֆակուլտետում բացարձակ առաջադիմությունը անվճար ուսուցման համակարգում կազմել է 75%, վճարովի ուսուցման համակարգում 54,8%:Ֆակուլտետում չունենք 12 կրեդիտ պարտք ունեցող ուսանողներ: Քննաշրջանը կազմակերպվել է հաստատված ժամանակացույցերին համապատասխան: Լուծարքային շրջանում քննական պրոցեսները իրականցվելու են հանձնաժողովներով:

Արտահայտվեցին.- Ա. Պոտոսյանը:

Նա նշեց, որ ամբիոնի վարիչները ու ԿԾ ղեկավարները մասնակցել են քննաշրջանին: Այն անցկացվել է օբյեկտիվ և պատշաճ մակարդակով: Քննական արդյունքները պարտադիր քննարկվել են ուսանողների հետ: Քննական գործընթացները որևէ ուսանողի կողմից գրավոր չեն բողոքարկվել: Նա առաջարկեց ֆակուլտետի ըստ մասնագիտությունների արդյունքները համարել բավարար:

Որոշեցին.- Ֆակուլտետի ըստ մասնագիտությունների 2019-2020 ուստարվա երկրորդ/գարնանային/ կիսամյակի I-III կուրսերի քննաշրջանի արդյունքները ընդունել ի գիտություն:

2.Լսեցին.-Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների անհատական բեռնվածության քննարկման և հաստատման մասին: /Զեկ. Գ. Ավետիսյան/

Լսեցին – Գ. Ավետիսյանին

Նա նշեց, որ ըստ 2020-2021 ուս. տարվա աշխատանքային ուսումնական պլանով նախատեսված բոլոր դասընթացները երկու մասնագիտական ամբիոնների կողմից բաշխված են, բաշխվել են նաև ավարտական աշխատանքները:

Արտադրական և ուսումնական պրակտիկաների կազմակերպումը հետաձգվել է՝ պայմանավորված համավարակով, այդ իսկ պատճառով բաշխում չի իրականացվել:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի յուրաքանչյուր անդամ տեղեկացվել է 2020-21 ուստարվա իր անհատական բեռնվածությունը:

Արտահայտվեցին - Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը

Նրանք նշեցին, որ ֆակուլտետում գործող երկու ամբիոնների դասախոսներին տրամադրվել են իրենց անհատական բեռնվածությունը և մինչև օգոստոսի 31-ը պետք է ամբիոններ ներկայացնեն անհատական բեռնվածությանը համապատասխան աշնանային կիսամյակում դասավանդվող դասընթացների փաթեթները:

Որոշեցին.-Հաստատել ներկայացված 2020-2021 ուստարվա ընդհանուր տնտեսագիտության և տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնների անհատական բեռնվածությունները:

3.Լսեցին- Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների 2019-20 ուս. տարվա գործունեության վերաբերյալ ամբիոնների վարիչների տարեկան հաշվետվությունների մասին /Զեկ. Մ.Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/ :

Լսեցին- Ընդհանուր տնտեսագիտության ամբիոն վարիչի պաշտոնակատար Մ. Միքայելյանին:

Մ. Միքայելյանը նշեց, որ «Ընդհանուր տնտեսագիտություն» ամբիոնի աշխատանքները կազմակերպվել են համաձայն հաստատված ամբիոնի աշխատանքային պլանի: Ամբիոնի բոլոր դասախոսները աշխատել են հաստատված անհատական ծանրաբեռնվածությունների շրջանակում և հիմնականում կատարել են այն պահանջները, որոնք նախատեսված են եղել ուսումնական գործընթացի տարբեր օղակների համար սահմանված ծրագրերով. ուսումնական պլանի համաձայն անհրաժեշտ ծավալի դասաժամերով կարդացվել են դասախոսություններ, անց են կացվել սեմինար ու գործնական պարապմունքներ, ինչպես նաև համապատասխան ընթացիկ ու ամփոփիչ քննություններ և ստուգումներ: Կատարվել են դասալսումներ, փորձի փոխանակում, համատեղ սեմինարներ, որոնց վերաբերյալ անցկացվել են քննարկումներ համապատասխան ամբիոնի նիստերում:

Լսեցին.- Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանին:

Գ. Հովհաննիսյանը ներկայացրեց, որ 2018-2019 ուս. տարում «Տուրիզմի կառավարման և մշակութաբանություն» ամբիոնի ժամերը բաշխվել է ամբիոնի 11 դրույքով և 4 ժամավճարային հիմունքներով հրամանագրված աշխատակիցների միջև: Ամբիոնի գործունեությունը ճիշտ կազմակերպելու համար կազմվել են աշխատանքային գրաֆիկները և ժամանակացույցերը: Ամբիոնում իրականացվել է ավարտական և կուրսային աշխատանքների բաշխում: Ներկայացվել է դասախոսի անհատական զարգացման պլանը, կատարվել է փոխադարձ դասալսումներ: Երիտասարդ դասախոսների համար իրականացվել է խորհրդատվություն, մասնավորապես ուսումնական փաթեթի կազման վերաբերյալ: Ամբիոնի դասախոսների կողմից իրականացվել են դասալսումներ, անյուհետև արդյունքերի քննարկում, տրվել են կոնկրետ լուծումներ: Ամբիոնի ուշադրության կենտրոնում է նաև դասախոսների գիտական գործունեությունը:

Արտահայտվեցին.- Ա. Պոտոսյանը

Նա նշեց, որ ամբիոնների վարիչները լուրջ վերաբերմունք դրսևորեն դասախոսների գիտական աշխատանքների նկատմամբ: Հնարավորիս հետամուտ լինեն ուսումնամեթոդական հրապարակումների մասնակցությանը: Հրապարակումները լինեն ԲՈԿ-ի կողմից երաշխավորված հանդեսներում:

Որոշեցին.- Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների 2019-20 ուստարվա ամբիոնների վարիչների աշխատանքները գնահատել բավարար:

3.Լսեցին. - Ֆակուլտետի դեկանի ամփոփիչ հաշվետվության մասին/ Զեկ. Գ. Ավետիսյան/:

Գ. Ավետիսյանը ներկայացրեց 2019-2020 ուս. տարվա հաշվետվությունը, նշելով,որ ԵՊՀ ԻՄ-ի տնտեսագիտության ֆակուլտետը իր գործունեությունը իրականացրել է հիմք ընդունելով ԵՊՀԻՄ ռազմավարությունը, կանոնադրությունը և տնտեսագիտության ֆակուլտետի 2019-20 ուս.տարվա աշխատանքային պլանը: Ֆակուլտետում գործում է երկու մասնագիտական ամբիոն՝ ընդհանուր տնտեսագիտության, տուրիզմի կառավարման և մշակութաբանության, որտեղ դասախոսների թիվը 37 –ն է, որից 4-ը պրոֆեսոր, 3-ը դոցենտ, 16-ը ասիստենտ և 14 դասախոս:

Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի մեկ դասախոս ԵՊՀ-ի հայցորդ է: Ա. Եգանյանը հանձնել է կրեդիտային համակարգով սովորող առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների համար նախատեսված ստուգարքները: Նա հանձնել է նաև «Օտար լեզու» և «Ինֆորմատիկայի և համակարգչից օգտվելու հիմունքներ» դասընթացների որակավորման տարբերակված ստուգարքները:

Տնտեսագիտության ֆակուլտետը սերտ համագործակցում է մասնաճյուղի բոլոր ստորաբաժանումների հետ: Դասավանդման առաջավոր փորձի փոխանցման և երիտասարդ դասախոսների աջակցման կենտրոնի հետ համագործակցության արդյունքում 2019-20 ուս. տարվա ընթացքում կազմակերպված դասախոսները մասնակցել են վերապատրաստման դասընթացներին:

Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի կողմից իրականացվել է «Ինչպե՞ս գրել ավարտական աշխատանք» դասընթացը / իրականացնող Գ. Հովհաննիսյան/:

Ֆակուլտետը սերտ համագործակցում է ԿԲ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի և «Գժելի» պետական համալսարանի հետ: Հաշվետու տարում տեղի է ունեցել մեկ հանդիպում ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի և ԿԲ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի աշխատակիցների միջև: Հանդիպումների ժամանակ համագործակցության ծրագրերի քննարկումներ է իրականցվել, մասնավորապես.

-ԿԲ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի աշխատակիցներ դասավանդման հնարավորությունները ֆակուլտետում (դասավանդում են 7 աշխատակից),

- Ֆինանսներ կրթական ծրագրի /2020-2024թթ/ վերանայման(առկա է նոր ուսումնական պլանը), ինչպես նաև Ֆինանսներ կրթական ծրագրում/2019-2023թթ/ դասընթացների վերանայման, բեչմարկինգի գործընթացներ (վերանայվել է բոլոր դասընթացները),

-ԿԲ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում ֆակուլտետի ուսանողների մասնգիտական պրակտիկայի իրականացման հնարավորությունները(5 ուսանող),

-պարբերաբար ԿԲ մասնգետների աջակցությամբ ֆակուլտետում սեմինար-քննարկումների կազմակերպում (երկրորդ կիսամյակում արտակարգ իրավիճակի պայմաններում չի իրականացվել):

Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնը և «Գժելի» պետական համալսարանը համատեղ 2019թ. փետրվարին կազմակերպել են միջազգային գիտաժողով

«Զբոսաշրջությունը և մշակույթը. երեկ, այսօր, վաղը» խորագրով: 2019-20 ուստարվա առաջին կիսամյակում տպագրվել է հոդվածների էլեկտրոնային տարբերակը:

Գ. Ավետիսյանը ներկայացրեց, որ Ֆակուլտետում տեղի է ունեցել սեմինար քննարկում.

«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքար» թեմայով որը կազմակերպվել էր Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի Տնտեսական հետազոտությունների վարչության տնտեսագետ Արթուր Ղալթախչյանի և ԵՊՀ ԻՄ-ի տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողական խորհրդի համագործակցությամբ /30.11.2019/: Այն վարել է ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների մասնագետ Գևորգ Գրիգորյանը:

2020թ. մայիսի 6-ին Շուշիի տեխնոլոգիական համալսարանի էկոնոմիկայի և կառավարման ամբիոնը կազմակերպել էր «Արցախի տնտեսության զարգացման հիմնախնդիրները թեմայով» առցանց կլոր սեղան-քննարկում, որին հրավիրվել էին ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի դոցենտ Գայանե Ավետիսյանը, ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր Միքայել Միքայելյանը, նույն ամբիոնի ասիստենտ, տ.գ.թ. Գևորգ Մինասյանը:

Գևորգ Մինասյանը հանդես է եկել զեկույցով:

Գ. Ավետիսյանը նշեց, որ ֆակուլտետը շարունակում է աջակցել ուսանողներին՝ աշխատանք գտնելու հարցում: Սակայն, արտակարգ իրավիճակով պայմանավորված, նախատեսված ծրագրերը չեն իրականացվել:

Գ. Ավետիսյանը արժևորելով պրակտիկայի դերը նշեց, որ ֆակուլտետում իրականացվել է մի շարք ճանաչողական պրակտիկաներ, որն ավելի է ամրապնդել ուսանողի տեսական գիտելիքները:

Նա մասնավորապես նշեց, ԵՊՀ ԻՄ հիմնադրման 25-ամյակին նվիրված «Զբոսաշրջություն» մասնագիտության համար կազմակերպվել է քայլարշավ Աղավնավանք-Գոշավանք- Գոշի լիճ-Իջևան երթուղիով, իսկ «Ֆինանսներ» մասնագիտության ուսանողների համար ճանաչողական այց Երևանում գործող «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ (նախկինում՝ «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա»), որը ՀՀ միակ ֆոնդային բորսան է:

Ֆակուլտետը մասնագիտության կողմնորոշման բաժնի հետ համատեղ կազմակերպել է դիմորդների շրջայց, դասապրոցեսների մասնակցություն: Նշված բաժնի հետ ֆակուլտետից

ներկայացուցիչները այցելել են մարզի դպրոցներ: Ամբիոնի դասախոսներից Պ. Ասիլբեկյանը հանդես է եկել ակնարկային դասախոսությամբ Տավուշի մարզի Բերդի և Նոյոմբերյանի որոշ դպրոցներում:

Ֆակուլտետում արդյունավետ գործում է կրթական ծրագրի ղեկավարների ինստիտուտը: Գործող երկու կրթական ծրագրերում էլ մասնագիտական որոշ դասընթացների շրջանակում ներառվել է հետազոտական բաղադրիչ:

Գ. Ավետիսյանը նշեց, որ «Տնտեսագիտության» ֆակուլտետում 2019-20 ուստարում առաջին կիսամյակում սովորող ուսանողների թիվը կազմել է 108, որից 36 ուսանող անվճար: 35 ուսանող ստացել է պետական կրթաթոշակ, մեկ ուսանող՝ անվանական: Իսկ երկրորդ կիսամյակում ուսանողների թիվը կազմել է 105 ուսանող, որից 36 անվճար: 34 ստացել են պետական կրթաթոշակ, երկուսը՝ անվանական:

Գ. Ավետիսյանը նշեց, որ 2019-20 ուստարում ֆակուլտետի աշխատանքները արդյունավետ կազմակերպելու համար սահմանված ժամկետներում իրականացվել է հետևյալ ընթացիկ գործընթացները.

-կազմվել է դասացուցակը, անհրաժեշտ ժամանակացույցերը,

-ամբիոնները ապահովել են պրակտիկաների ծրագրերի, դասընթացների փաթեթների առկայությունը, ավարտական և կուրսային աշխատանքների ցանկը և դրանց իրականացման գործընթացը,

-ամբիոնային ծանրաբեռնվածության հիման վրա ամբիոնը իրականացրել է 2020-21 ուս տարվա համար անհատական բեռնվածության նախնական բաշխում և քննարկումներ դասխոսների հետ:

Դեկանը նշեց, որ երկրորդ կիսմյակում ամբողջ ուսումնական պրոցեսն անխափան իրականացվել է հեռավար/Zoom հարթակի միջոցով/:

Արտահայտվեցին.- Գ. Հովհաննիսյանը, Մ. Միքայելյանը:

Արտահայտվողները բարձր գնահատեցին դեկանի պաշտոնակատարի կատարած աշխատանքը: Նրանք նշեցին, որ ֆակուլտետում առկա խնդիրները լուծվում են կոլեկտիվի համագործակցությամբ: Նրանք հույս հայտնեցին, որ բացթողումները, որոնք տեղ էին գտել այս ուսումնական տարում, կշտկվեն, իսկ իրենք իրենց հերթին կաջակցեն անխափան աշխատանքին:

Որոշեցին. –

1. *Հավանություն տալ տնտեսագիտության ֆակուլտետի աշխատանքային պլանով 2018-2019 ուստարում նախատեսված գործողությունների վերաբերյալ դեկանի հաշվետվությունը:*
2. *Տնտեսագիտության ֆակուլտետի 2019-2020 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:*

Գիտական խորհրդի նախագահ՝ *Գ. Ավետիսյան*

Քարտուղար՝ *Ա. Ալեքսանյան*